# ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

**«Երկրի ձայնը».**—Չնայած ազատ խօսքի ամէն տեսակ անարգելումներին հայ հասարակութեան մէջ զարթնած գիտակցութիւնը շարունակում է քննադատել գործելու այն եղանակը, որ կատարել էին տասնեակ տարիների ընթացքում Հնչակեան— Դաշնակցական ազգային յեղափոխական կազմակերպութիւնները: «Մուրճը» վաղուց ի վեր որոշ դիրք է բռնել այդ կուսակցութիւնների տակտիկի վերաբերեալ: Անկախի և Արտաքին Տեսութեան մէջ յօդուածները շատ պարզ կերպով բնորոշում են մեր հայեացքները թիւրքահայկական դատի նկատմամբ: Առանձին աղմուկ հանեց «Մուրճի» յուլիսեան համարի (№ 7) արտաքին տեսութիւնը, որին յօդուածներ նուիրեցին տեղական մի քանի ռուս թերթեր, Արտասահմանում «Courier Européen» և Ամեդ Րիզաբէի «Mecheveret» օրգանը:

«Նոր ճանապարհ» լոզունգին է հետևել ուզում նաև Թիֆլիսում նոր լոյս տեսնող «Երկրի ձայնը» շաբաթաթերթը պ. Տ. Զաւէնի ղեկավարութեամբ, որ նպատակ է դնում «միութեան կամուրջ նետել հայ և թուրք տառապող ու հարստահարուող մասսաների միջև, մղելու համար դիւցազնական պայքարը բռնակալութիւնների ամէնաճիւաղայինի դէմ»—ընդհանուր յեղափոխութեան դիմելով բոլոր ցեղերի և ժողովրդների միահամուռ գրոհով:

Շաբաթաթերթի բոլոր յօդուածները պտտում են Թիւրքիայի շուրջ: Ցանկալի է որ նոր օրգանը միջոցներ ունենար ինչպէս հարկն է իրազեկ պահելու իր ընթերցողներին թիւրքական իրականութեան և նրա բոլոր ժողովրդների քաղաքական կեանքի շարժումների հետ: Չպէտք է բաւականանալ լոկ թուրքերի քաղաքական երևոյթների արձագանքներով. այլ ձգտելու է կապեր հաստատել և միւս ցեղերի կեանքի հոսանքները արտայայտող օրգանների հետ: Եթէ լաւ տարուի այս նոր օրգանը կարող է նպաստել Թիւրքիայի քաղաքական վերածնութեամբ հետաքրքրուող անձանց: Ցանկանում ենք աջողութիւն:

—

**«Նոր կեանք»**—գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ:—Նոր Նախիջևանում պ. Գր. Անոփեանի խմբագրութեամբ յուլիսի 2ից հրատարակւում է մեր բազմաթիւ շաբաթաթերթերից և այդ մէկը:

«Լայնածաւալ Ռուսաստանում ցիր ու ցան ընկած են մանր և անջատ հայ գաղութներ, որոնք խորթացած են Մայր հայրենիքից և ազգային ինքնագիտութիւնից: Շաբաթաթերթիս նպատակն է արծարծել և լուսաբանել հասարակական և ազգային շատ խնդիրներ և ընթերցանութեան թարմ նիւթ մատակարարել գլխաւորապէս Ռուսաստանի հայ գաղութներին և այդպիսով հետաքրքրութիւն շարժել նրանց մէջ դէպի հասարակական և ազգային կեանքը և մի ընդհանուր կապ հաստատել այդ անջատ գաղութների միջև: «Նոր կեանքը» ունենալով աւելի տեղական բնաւորութիւն, ուշադրութեան առանձին առարկայ կը դարձնի Նախիջևանի և նրա շրջակայքի հասարակական կեանքը»: Աշխատակիցների թւում է և պ. Մինաս Բերբերեանը: Լոյս տեսած համարներից կարելի է եզրակացնել որ շաբաթաթերթը տանւում է բարեխղճօրէն ազգային—լիբերալ ոգով, պակասում է նրա հրապարակախօսութեան մի քիչ աշխոյժ, և կենդանի ջիղ: